

Նիկոլ Փաշինեան Ժողովրդային Զօրակցութեան Ալիքի Վրայ Վարչապետ Ընտրուեցաւ

ԵՐԵՒԱՆ.- Երեքշաբթի, 8 Մայիսին, Ազգային ժողովի յատուկ նիստին, Նիկոլ Փաշինեան ընտրուեցաւ Հայաստանի վարչապետ: Խորհրդարանին մէկ երրորդին կողմէ Հայաստանի Հանրապետութեան վարչապետի պաշտօնին առաջադրուած Նիկոլ Վովայի Փաշինեանին կողմ քուէարկեցին 59 եւ դէմ՝ 42 պատգամաւորներ:



Փաշինեանին կողմ քուէարկեցին «Ելք» դաշինքի, ՀՅԴ եւ «Ծառուկեան» խմբակցութեանց պատգամաւորները: Անոնց միացան Հայաստանի Հանրապետական կուսակցութենէն 11 պատգամաւորներ: Շարունակութիւնը էջ 2

ԴԱՆԻԷԼ Ծ. ՎՐԴ. ՖԸՆՏՐԵԲԱՆ ՆՈՐԸՆՏԻՐ ԱՌԱՋՆՈՐԴ ԴԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԷԼԵԱՆ ԹԵՄԻ

Ամերիկայի տարեկան թեմական պատգամաւորական ժողովը գումարուած Ուայթ Փլէյնզի (Նիւ Եորք) Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, ընտրեց իր թեմակալ նոր առաջնորդը յանձին Դանիէլ Ծ. Վրդ. Ֆրնտրեբեանի, Մայիս 4, 2018ին փոխարինելով 28 երկար տարիներ այդ պաշտօնին ծառայած առաջնորդը՝ Խաժակ Արք. Պարսամեանը: Ան կը հանդիսանայ առաջին ամերիկածին հոգեւորականը որ կը բազմի Ղեւոնդ Դուրեանի, Գարեգին Յովսէփեանի, Տիրան Ներսոյեանի, Սիոն Մանուկեանի, Թորգոմ Մանուկեանի եւ Խաժակ Պարսամեանի գահին:



Ծնած է Թեքսաս նահանգի Ֆորթ Ուրթ քաղաքին մէջ եւ յաճախած՝ Ս. Ներսէս Շնորհալի ճեմարանը: Տնօրէնն է Առաջնորդարանի Գրիգոր եւ Գլարա Զօհրապ կեդրոնին եւ միաբան է Մայր Աթոռի միաբանութեան: «Պայքար» կը շնորհաւորէ Հայր Դանիէլը մաղթելով բեղմնաւոր եւ ազգաշէն գործունէութիւն եւ իր այս պաշտօնին մէջ, հայատրոփ ու հայաշունչ նթնուորտ մը պահելով մեր այս մեծ թեմէն ներս:

Մայիս 9-ը Դարձած է Մեր Հերոս Ժողովուրդի Յաղթանակներու Խորհրդանիշը. Բակօ Սահակեան

Արցախի Հանրապետութեան նախագահ Բակօ Սահակեան Մայիս 9-ին շնորհաւորական ուղերձ մը յղած է Յաղթանակի տօնին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան պաշտպա-նութեան բանակին եւ Շուշիի ազատագրման 26-րդ տարե-դարձին առիթով: Այս մասին կը տեղեկացնեն Արցախի Հանրա-պետութեան նախագահի աշխատակազմի տեղեկատուութեան գլխաւոր վարչութենէն:

Ուղերձին մէջ ըսուած է. «Միքելի՛ հայրենակիցներ, Հայրենական մեծ պատերազմի եւ Արցախեան ազատամարտի թանկագին՝ ն վերջերաններ, Պաշտպանութեան բանակի յարգարժան՝ զօրավարներ, սպաներ, զինուորներ,

Շարունակութիւնը էջ 5

Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհաւորեց ՀՀ նորընտիր վարչապետին

Մայիսի 8-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհաւորագիր է հղել տիար Նիկոլ Փաշինեանին՝ Հայաստանի Հանրապետութեան վարչապետի պաշտօնում ընտրուելու առիթով:



Վեհափառ Հայրապետի շնորհաւորական նամակում մասնավորապէս ասուած է. «ՀՀ Ազգային ժողովի կողմից Հայաստանի Հանրապետութեան վարչապետ ընտրուելու կապակցութեամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից յղում ենք Ձեզ Մեր շնորհաւորանքներն ու օրհնութիւնը:

Պատասխանատու այս պաշտօնին Դուք կոչուում եք երկրում ստեղծուած ներքաղաքական բարդ իրավիճակի պայմաններում՝ հանրային լայն շրջանակների աջակցութեամբ, քաղաքական ընդարձակ խորհրդակցութիւնների արդիւնքում:

Լիահոյս ենք, որ նախանձախնդիր ու հետեւողական ջանքերով պիտի նպաստեք մեր երկրում կայունութեան հաստատմանը եւ մեր ժողովրդի առջեւ ծառայած խնդիրների լուծմանը՝ հանուն մեր հայրենիքի զօրացման ու առաջընթացի»:

Յաջողութիւններ մաղթելով նորընտիր վարչապետին հայրենաշէն ու ազգօգուտ իր ծրագրերի ու նախաձեռնութիւնների իրագործման ճանապարհին՝ Նորին Սրբութիւնը յայցել է Բարձրեալին խաղաղութեան ու բարօրութեան մեջ պահել Հայոց երկիրն ու հաւատաւոր ժողովրդին:

Ռամկավար Ազատական կուսակցութեան շնորհաւորանքը Նիկոլ Փաշինեանին ՀՀ վարչապետ ընտրուելու կապակցութեամբ

Ռամկավար Ազատական կուսակցութիւնը Հայաստանում եւ Սփիւռքում գործող իր բոլոր կառույցների անունից ջերմօրէն շնորհաւորում եւ յաջողութիւններ է մաղթում պրն Նիկոլ Փաշինեանին ՀՀ վարչապետ ընտրուելու կապակցութեամբ: Իրոք, ծանր բեռ եւ պարտաւորութիւն, որի արդիւնաւորումից է կախուած մեր ժողովրդի ու պետութեան անվտանգ, խաղաղ եւ բարօր կեանքը, պետական եւ ազգային բոլոր մարզերում մեր երկրի, ողջ հայութեան յետագայ զարգացման ընթացքը:

Համաժողովրդական ոգեւորութիւնից, ինքնահիացումից եւ արդար յաղթանակի բերկրանքից սթափուելու ժամն է արդէն, տքնանքի, ուժերը լարելու, դիմանալու եւ դիմակայելու ժամը, ժամը իմաստուն եւ իմաստաւորուած աշխատանքի, որի միջոցով միայն պիտի կերտենք մեր մատղաշ սերունդների ապագան:

Պատմական այդ լքջագոյն առաքելութեան յաջողութեան համար ՌԱԿ-ը պատրաստակամ է Մայր հայրենիքում թէ Սփիւռքում իր ողջ կարողականութիւնները միաձուլել յետագայ օրերին կազմուելիք նոր կառավարութեան ջանքերին, ամէն գնով նպաստել երկրում ժողովրդավարութեան, արդարութեան, տնտեսութեան իսկական ազատականացման, արդիւնաբերութեան, գիղատնտեսութեան, առեւտուրի, կրթութեան, մշակոյթի եւ զբօսաշրջութեան զարգացման ուղղութեամբ տարուելիք աշխատանքներին:

ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

ԿԵՂՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ԳԵՐԱԳՈՅՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Յակոբ Ավետիքեան

Վարդան Նազիրեան

Ատենապետ

Ատենապետ

Նոր Աշխարհի Արխիվն 1991

ՍԱՐՏԱՐԱՊԱՏԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԸ ԵՒ ՄԱՅԻՍԵԱՆ ՇՈՒՆՉԸ

«Չիք Անցք»

Այս էր 22 Մայիս 1918ին Սարտարապատի դաշտին վրայ, հայ ժողովուրդի ապառաժեայ կամքին կարգախօսը:

Դեպի Սարտարապատ, դեպի ճակատամարտ, դեպի ազատություն եւ գոյատևում:

Եղեռնին դուրս եկած հազար վերքերով խոցուած, համայն հայ ժողովուրդը, որպէս մէկ բունցք, վերապրելու եւ գոյատևելու կրանիտեայ վճռակամութեամբ, ոտքի կանգնեցաւ կասեցնելու թրքական զինուորական ոյժի փառապսակը, Կելիպոլի կոչուած բանակը. բանակ մը որ Չանաքալի կոչուներուն Անգլիացիներուն դէմ յաղթանակի դրօշները բարձրացուցած էր, եկած էր անգութօրէն ճգնելու եւ վերջ տալու հայ ժողովուրդի մնացորդացին:

Հայ ժողովուրդը ամբողջութեամբ հոն էր, Սարտարապատի դաշտին վրայ: Հայոց Եկեղեցին գէնքի ուժին միացուց հոգեւոր ոյժը. ժողովուրդը պէտք ունէր այդ ոյժին, ու հնչեցին Արարատեան դաշտի զանգերը, ոյժ եւ քաջութիւն ոգոյանջեցին եկեղեցւոյ զանգերը, եւ հոգեւորականութիւնը երգեց «Զարթի՛ք փառք իմ, զարթի՛ք...»:

Ամէն հայ զէնքը ի ձեռին, ամէն հայ հաստատ իր հաւատքին ու կառչած իր հողին կ'աղօթէր եւ կ'ուխտէր պոռալով «Չիք Անցք» Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեորգ Ե. Սուրենեան կը յայտարարէ: «Ես կը մնամ Էջմիածնի մէջ, ես կը մնամ իմ ժողովուրդիս մէջ, կ'ապրիմ կը մեռնիմ նրա հետ: Ես իմ նախորդ Հայրապետներու եւ Էջմիածնի աւանդապահն եմ: Էջմիածնի Միաբանութիւնն ալ պիտի մասնակցի այս ճակատամարտին, ցոյց տալով, որ հինգերորդ դարի Վարդանանց պատերազմի ժամանակուայ հայ հոգեւորականութեան հոգին անմահ է մեր միաբանութեան մէջ»:

Թրքական 80.000 զօրքերը 25 Ապրիլ 1918ին Կարսի մէջ կը գրաւեն ռուսական նահանջող բանակէն մնացած բոլոր ռազմամթերքները եւ սննդամթերքներու պահեստի պաշարները, ինչպէս նաեւ բիրին հրետանիներու շարքը, եւ կը շարունակեն իրենց արշաւանքը դեպի արեւելք:

Անոնք զինուորական գործողութիւններո կ'անջատեն հայկական զօրաբաժինները իրարմէ:

15 Մայիսին կը հասնին Ալեքսանդրապոլ եւ կը գրաւեն երկաթուղագիծը, եւ հայ ժողովուրդը պատերազմական դիրք կը գրաւէ երեք ճակատներու վրայ Ալեքսանդրապոլ, Բաշ-Ապարան եւ Սարտարապատ:

Մայիս 21ին թուրքերու կողմէ գրաւուած Սարտարապատի կիսակայանը, Մայիս 22ի առաւօտեան գրոհի կը մատնուի հայ ռազմիկներու կողմէ, եւ մէկ օրուայ մէջ Սարտարապատը վերագրաւելով նահանջի կը մատնեն ցեղասպան թուրքին մինչեւ Արաքս գետի ափերը:

Սարտարապատի միօրեայ յաղթանակի լուրը սարէ սար տարածուեցաւ: Ոգեպնդուեցան հայ ժողովուրդի հերոս ցեղի անմահ զաւակները, եւ ճակատէ ճակատ ու ռազմէ ռազմ բարձրացուցին յաղթանակի եւ ազատութեան դրօշը:

Հայ հերոսները «Գորշ Գայլին» անարգ վռնակները ետ մղեցին Բաշ-Ապարանէն եւ Ալեքսանդրապոլի պարիսպներէն, թուրքին առասպելական եաթաղանը փշրուեցաւ Սասունցի Դաւիթի ոգիով զանուած հայկեան թուրէն, եւ հայ ժողովուրդը իր սրբազան պատերազմին շնորհիւ տիրացաւ յանդուրդեան վկայագրին եւ անկախութեան դրօշին:

Թրքական բռնատիրութիւնը Սարտարապատի յաղթանակի զարկերուն տակ կը յայտարարէր Հայաստանի անկախութիւնը Մայիս 28ին, նման անկախութիւն մը որ երկու օրեր առաջ շնորհուեցաւ Վրացիներուն եւ Ատրպեյճանցիներուն:

Սարտարապատի դիւցազնամարտը հայ ժողովուրդի արեան զինով վաստակուած յաղթանակ մըն է: Սարտարապատը խորհրդանիշն է հայրենասիրութեան, նուիրումի, անձնագոհութեան, քաջագործութեան եւ միասնականութեան:

Շարունակուած էջ 1-էն

Նիկոլ Փաշինեան Ժողովրդային Զօրակցութեան...

Ընտրուելէ ետք, Փաշինեան միացաւ Հանրապետութեան հրապարակ հաւաքուած բազմահազար զօրակցողներուն, որոնց ուղղեց իր շնորհատրական խօսքը:

Փաշինեան ապա իր կնոջ հետ մեկնեցաւ Բաղրամեան 26՝ վարչապետի նստավայր:

Նշենք, որ Փաշինեան Չորեքշաբթի, 9 Մայիսին, Արցախ պիտի մեկնի՝ մասնակցելու Շուշիի ազատագրութեան 26րդ տարեդարձի տօնակատարութեան:

Ստորեւ կը ներկայացնենք կառավարութեան կայքին վրայ տեղադրուած Նիկոլ Փաշինեանի կենսագրութիւնը.

«Նիկոլ Փաշինեանը ծնուել է 1975թ. Յունիսի 1ին, Իջևանում:

1991 թուականին աւարտել է Իջևանի թիւ 1 դպրոցը, նոյն թուականին ընդունուել է ԵՊՀ բանասիրութեան ֆակուլտետի ժուռնալիստիկայի (լրագրութեան-Խմբ.) բաժին: Ըստ Նիկոլ Փաշինեանի՝ չնայած գերազանց առաջադիմութեանը, հինգերորդ կուրսում՝ աւարտական քննութիւնների մեկնարկից մի քանի օր առաջ, վարչական որոշմամբ հեռացուել է Երևանի Պետական համալսարանից (1995թ.):

1992 թուականից ակտիւօրէն զբաղուել է լրագրութեամբ: 1994-1998 թուականներին «Լրագիր» թերթի հետ համագործակցում է որպէս լրագրող:

1998-99 թուականներին «Օրագիր» օրաթերթի գլխաւոր խմբագիրն էր:

999թ.ից «Հայկական Ժամանակ»ի գլխաւոր խմբագիրն է: Լրագրողական գործունէութեան ընթացքում մի քանի անգամ Փաշինեանի դէմ յարուցում են քրեական գործեր, նոյնիսկ դատապարտում է ազատագրկման, սակայն պատժաչափը պայմանականօրէն չի կիրառուում:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆ

1998 թուականին ՀՀ նախագահի թեկնածու Աշոտ Բլէեանի նախընտրական շտաբի անդամ էր:

2006 թուականին մասնակցում է «Այլընտրանք» հասարակական-քաղաքացիական (հ/ք) նախաձեռնութեան հիմնադրմանը:

2007 թուականին «Ժողովրդավարական Հայրենիք», «Պահպանողական» կուսակցութիւնների եւ «Այլընտրանք» հ/ք նախա-ձեռնութեան կազմած «Իմպիչմենթ» նախընտրական դաշինքի անդամ, նախընտրական ցուցակի 1ին համար: «Իմպիչմենթ» դաշինքի նախընտրական հանրահաւաքների ժամանակ հանդէս է եկել «Ո՛չ դողացմանը, ո՛չ տրոտսացմանը, ո՛չ սերժանտացմանը» կարգախօսով:



Սարտարապատի ճակատամարտէն յաղթական դուրս եկած հայ ժողովուրդը անակնկալի առջեւ գտնուեցաւ 4 Յունիս 1918ին Պաթումի դաշնագրին ստորագրութեամբ: Սարտարապատի յաղթական ռազմադաշտէն վերադարձած, Սարտարապատի արծիւը զօրավար Դանիէլ-Բեգ Փիրումեան յախուռն կերպով կը բողոքէ ըսելով: «Ես չեմ կարող իմ յաղթական զօրքին յայտնել այդ խայտառակ լուրը, նրան ետ դարձնել իր արիւնով նուաճած դիրքերից: Նահանջը կազմալուծիչ, կը լինի իմ զօրքի համար, ես գիծը չեմ վերադառնայ, գնացէք եւ այդ սեւ գործը դուք ինքներդ կատարեցէք»:

Թուրքերուն կրած պարտութիւնը Սարտարապատի դաշտին վրայ, յաղթանակի վերածուեցաւ Պաթումի դաշնագրով: Այս յաղթանակը անբաւարար էր թուրքերուն համար, 8 Դեկտեմբեր 1920ին Ալեքսանդրապոլի դաշնագրով Հայաստանի սահմանները կ'ամփոփուին Երևանի նահանգի 12.000 քառ. Զլմ. տարածութեան մէջ:

Այսօր հայրենի պետականութիւնը եւ ժողովուրդը կը գտնուի քաղաքական, տնտեսական եւ ռազմական դժուարին վիճակի մէջ: Մենք այսօր աւելի քան, երբեք պէտք ունինք Սարտարապատի յանդուգն, միասնական, քաջակորով եւ իմաստուն ոգիին: Չափազանցած չենք ըլլար եթէ ըսենք, վտանգուած են մեր ափ մը հայրենիքի սահմանները եւ հայ ժողովուրդը կը գտնուի առանձին, անօգնական դժուարին վիճակի մէջ: Մեզի համար ներելի չէ որեւէ սխալ, ոչ մէկ արկածախնդրութիւն, ոչ մէկ գրգռող եւ վնասող քաղաքական արտայայտութիւն: Սարտարապատի համե-րաշխութեան, միասնականութեան, իրար օգնութեան եւ սիրոյ ոգին պէտք է տիրէ ամէն մէկ հայու հոգիին եւ միտքին մէջ: Ժամանակն է որ ազգային ողջամիտ գիտակցութիւնը առաջնորդէ մեր քայլերը, որպէսզի կարենանք ազատութեան շունչով պահել, պահպանել եւ ծաղկեցնել մեր փոքր սակայն աննման մեր հայրենիքը:

ԿԱՐՈՂ ԵՆՔ ՄՏՆԵԼ ԻՍԿԱԿԱՆ ՊԱՌԼԱՍԵՆՏԱՐԻԶՄԻ ԴԱՇՏ

ՅԱԿՈՒԲ ԱԻԵՏԻՔԵԱՆ



Առայժմ դժուար է եզրակացնել, թե ի՞նչը մղեց ՀՀԿ-ին ընդամենը կէս օրում փոխելու իր անտեղիտալի կեցուածքը եւ յայտարարելու, թե յառաջիկայ Մայիսի 8-ին Հայաստանը կունենայ ոչ ՀՀԿ-ական նոր վարչապետ. կարեւոր մայրաքաղաքներից ստացուած շտապեցնող թելադրանքն էր, Մարտի 2-ին երկրի գրեթէ ամբողջովին անդամալուծուած վիճակը, թե՛ սեփական շարքերը կուռ պահելու մտահոգությունը: Թերեւս այդ բոլորը համատեղ: Ներկայ պահին կարեւորը այն է, որ մեր երկիրը կարող է դուրս գալ փակուղային վիճակից եւ ի վերջոյ օժտուել նոր, համաձայնեցուած կառավարութեամբ: Աւելին մուտք գործել քաղաքական նոր իսկական պատլամենտարիզմի դարաշրջան, եթէ...

Վերելում գործածեցի «համաձայնեցուած» բառը, ոչ պատահաբար: Դա տարբեր է «համաձայնականից», եւ բոլորովին տարբեր «ազգային համաձայնականից»: Դա այն է, ինչը արդէն մէկ դարուց աւել կիրառուում է եւրոպական շատ երկրներում եւ կոչուում է «փոքրամասնական կառավարութիւն»: Այսինքն մի կառավարութիւն, որի վարչապետը, տուեալ խորհրդարանում մեծամասնութիւն չունենալով հանդերձ ընտրուում է անհրաժեշտ մեծամասնութեան ձայներով, սակայն չի հանդիսանում մեծամասնութեան ընտրած վարչապետը, սակայն իր գործունէութեան ընթացքում տուեալ երկիրը կառավարում է միւս կուսակցութիւնների հետ փոխադարձ համաձայնութիւնների եւ քաղաքական սակարկութիւնների պայմաններում, մինչեւ... յաջորդ հերթական կամ արտահերթ ընտրութիւններ:

Որպէս կանոն նման կառավարութիւնները համարում են տկար կամ կախեալ: Սակայն տկարութիւնը պատճառ չի դարձել, որ, օրինակ, նման մօտերը չկիրառուի պատլամենտական կառավարման ամենադասական երկրում Մեծ Բրիտանիայում, նոյնիսկ երկրի համար ճակատագրական պահերին, ինչպէս Առաջին համաշխարհային պատերազմի նախօրէին կամ Ուինսթոն Չերչիլի վարչապետութեան ժամանակաշրջանում:

Սակայն փոքրամասնական կառավարութիւնների դասական օրինակը մեզ տալիս է Դանիան, որտեղ նման կառավարութիւնները, առնուազն վերջին 40-50 տարիներին, աւելի յաճախ են ստեղծուել, գործել եւ գործում, քան մեծամասնականները: Եւ յաջողութեամբ, որի բանալին, ինչպէս ասուեց վերելում, վարչապետի եւ իր թիմակիցների ձկունութիւնն է, փոխզիջումային գործեւակերպը, այլ խօսքով իսկական պատլամենտարիզմը:

Անշուշտ, փոքրամասնական կամ կախեալ կառավարութիւնները հէնց հաւեսի համար չեն ստեղծուում: Այլ փակուղային իրավիճակի հետեւանքով կամ արդիւնքում, հէնց այնպիսի իրավիճակում, ինչպիսին առկայ է մեր երկրում, ուր հասարակութեան ամենալայն շերտերը մերժում են խորհրդարանում հանգիստ մեծամասնութիւն ունեցող ՀՀԿ-ի եւ վերջինիս սկզբնապէս առաջադրած, ընտրած եւ այնուհետեւ հրաժարական տուած վարչապետի միահեծան, գրեթէ միապետական կառավարումը, իսկ այնուհետեւ նոյնինքն ՀՀԿ-ի գերիշխանութիւնը: Ռամկավարական-դեմոկրատական երկրներում նման փակուղային վիճակից դուրս պրծնելու ձեռքից մէկը կը լինէր հանրաքուէի կամ խորհրդարանական արտահերթ ընտրութիւնների անցկացումը: Դժբախտաբար մեր պարագայում այդ երկու ելքերն էլ դժուար իրագործելի են. հանրաքուէն մեր Սահմանադրութեան պայմաններում գործնականում անիրագործելի է, իսկ արտահերթ ընտրութիւնները՝ ահա՛ գլխաւոր խոչընդոտը՝ շատ դժուար է լինելու հրել ՀՀԿ-ի կոկորդից ցած, քանի որ իբրեւ իշխանութիւն նրան մնացել է այդ վերջին պատառը խորհրդարանական մեծամասնութիւնը, որն անշուշտ ժամանակաւոր է ըստ ամենայնի:

Անշուշտ կայ նաեւ մէկ այլ ելք բռնի յեղաշրջումը, որը մեր օրակարգից կտրականապէս դուրս է, դուրս էլ պէտք է մնայ:

Հետեւաբար միակ ելքը, անկախ «Ելքի» ու նրա լիտերի նախընտրութիւններից, ժամանակաւոր փոքրամասնական կառավարութեան կազմումն է, հասկանալով հանդերձ այն ահռելի դժուարութիւնները, որոնք դէմ են առնելու դրա կայացմանը եւ

Մէլինա Տոդանը շնորհաւորած է հայ ժողովուրդը՝ նոր վարչապետ ունենալուն առիթով

Թուրքիոյ ազգային մեծ ժողովի հայ պատգամաւոր Մէլինա Տոդանը շնորհաւորական խօսք յղած է ՀՀ վարչապետի պաշտօնին Նիկոլ Փաշինեանի ընտրուելուն առիթով:

Ըստ Ermenihaber.am-ի՝ Թուրքիոյ ընդդիմադիր քեմալական «Ժողովրդահանրապետական կուսակցութեան» (ժՀԿ-CHP) պատգամաւոր տիկին Տոդանը «Twitter»-ի իր էջին վրայ կատարած է հետեւեալ արձանագրութիւնը. «Հայաստանի մէջ տեղի ունեցող զարգացումները պիտի մտնեն ժողովրդավարութեան համաշխարհային պատմութեան մէջ: Ոչ մէկ ուժ կրնայ կանգնիլ ժողովուրդի ժողովրդավարական պահանջներուն առջեւ: Կը շնորհաւորեմ այդ պահանջները առաջնորդողները: Շնորհաւոր ժողովուրդի յաղթանակը: Կեցցէ Հայաստանը»

Նիկոլ Փաշինեան...

2008 թուականին եղել է ՀՀ առաջին նախագահ, ՀՀ նախագահի թեկնածու Լեւոն Տէր Պետրոսեանի նախընտրական շտաբի անդամ:

2008թ. Մարտի 2ին, քաղաքական հետապնդումներից խուսափելով, Փաշինեանն անցնում է ընդդիմութեան:

2009 թուականի Յուլիսի 1ին, 1 տարի 4 ամիս ընդլայնուած մնալուց յետոյ ինքնակամ ներկայանում է ՀՀ դատախազութիւն եւ ձերբակալուում:

2010 թուականի Յունուարի 19ին Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանի դատարանը դատաւոր Մնացական Մարտիրոսեանի նախագահութեամբ Նիկոլ Փաշինեանին ՀՀ ՔՕ 225 յօդուածի առաջին մասով դատապարտում է 7 տարուայ ազատազրկման:

Պատժի սկիզբը հաշուառուում է 2009 թուականի Յուլիսի 1ից: Յետագայում Փաշինեանի պատժի ժամկետը կիսով չափ կրճատուում է, իսկ 2011 թուականի Մայիսի 28ին՝ Հայաստանի անկախութեան 20ամեակի առթիւ յայտարարուած համաներման շրջանակներում, ազատ է արձակուում:

2012 թուականի Մայիսի 6ին ընտրուել է ՀՀ Ազգային ժողովի պատգամաւոր ՀԱԿ համամասնական ընտրացուցակով:

2013 թուականին համահիմնադրել է «Քաղաքացիական Պայմանագիր» հանրային-քաղաքական միաւորումը:

2017 թուականի խորհրդարանական ընտրութիւններին մասնակցում է «Ելք» դաշինքով եւ 7 տոկոս ձայներով դաշինքով մտնում է խորհրդարան եւ ընտրուում որպէս խմբակցութեան ղեկավար:

2018 թուականին Նիկոլ Փաշինեանի առաջնորդութեամբ մեկնարկեց «Իմ քայլը» նախաձեռնութիւնը, որը Գիւմրիից դէպի Երեւան քայլարշաւ էր կազմակերպել ընդդէմ Սերժ Սարգսեանի վարչապետութեան: Նրա ղեկավարած նախաձեռնութիւնը համագործակցում էր Սերժ Սարգսեանի իշխանութեան դէմ պայքարող այլ ուժերի հետ եւ լայն աջակցութիւն ստացաւ բնակչութեան տարբեր հատուածների կողմից: Քաղաքացիական հասարակութեան կողմից սկսուած մասշտաբային անհնազանդութեան ակցիաների հետեւանքով Ապրիլի 23ին ՀՀ վարչապետ Սերժ Սարգսեանը հրաժարական տուեց իր պաշտօնից:

Նիկոլ Փաշինեանն ամուսնացած է, ունի երեք դուստր եւ մէկ որդի: Կինը՝ Աննա Յակոբեանը, «Հայկական Ժամանակ» թերթի գլխաւոր խմբագիրն է: Զուակներն են Մարիամը (ծնուած 1998 թուականի Նոյեմբերի 14ին), Աշոտը (ծնուած 2000 թուականի Մարտի 11ին), Շուշանը (ծնուած 2007 թուականի Յուլիսի 17ին) եւ Արփին:

ընթացքին սկսած կառավարութեան կազմութեան, իւրաքանչիւր օրինագծի ընդունման, նոյնիսկ լաւագոյն նախաձեռնութեան հաստատման գործում, գումարած համապատասխան եւ անհրաժեշտ արանդոյթների բացակայութիւնը է՛ւ մեր հասարակութեան, է՛ւ իշխանական-քաղաքական օղակներում, եւ ոչ միայն:

Դժուար է լինելու, շատ դժուար: Պահանջում է ձկունութիւն, ոչ սկզբունքային հարցերում զիջողականութիւն, ներքաղաքական սակարկութիւններ, ռեւանշիզմի դէմ պայքարելու կարողութիւն, թուացեալ իւրայինների դաշունահարումներից խուսափում: Դժուար բայց վարձահատոյց:

Որովհետեւ այդ կերպ Հայաստանը կարող է թեւակոխել իսկական պատլամենտարիզմի ժամանակաշրջան. դա կը լինի պատմական նշանակալից նուաճում մեր երկրի ու ժողովրդի համար:

Սուրբ Էջմիածնի Կրօնասէր Տիկնանց Համախմբում

58-ԱՄԵԱՅ ԱՐԹՈՒՆ ՊԱՅԱԿՆԵՐԸ ՀՈԳԵՒՈՐ ԱԲԱՆԴԻՆ

ՊԱՅԾԻԿ ԳԱԼՍՅԵԱՆ

58 տարի առաջ, 1959ին, Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին բախտաւորուեցաւ Պէյրութի մէջ հիմնադրուով Սուրբ Էջմիածնի Կրօնասէր Տիկնանց Համախմբումին, որուն գործունէութեան 58 ամեակը շքեղօրէն տօնուեցաւ Կիրակի, 29 Ապրիլ 2018ին, կէսօրուան ժամը 12-էն սկսեալ, ՀԲԸՄ-ի Տեմիրճեան կեդրոնին մէջ, յատուկ հանդիսութեամբ:



Արմաշ Արք. Նալպանտեան «Գիր Օրհնութեան»ը կը յանձնէ Տիկին Ազատուհի Սիմոնեանին

58 տարի շարունակ, Համախմբումի իւրաքանչիւր անդամուհի ոչ մէկ ճիգ խնայեց նեցուկ կանգնելու եւ պաշտպան հանդիսանալու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ իր բարոյական եւ նիւթական անշահախնդիր աջակցութիւնը բերելով առանց սակարկութեան: Անոնք իրենց հոգատար վերաբերումով, անհուն սիրով եւ զոհաբերութեամբ կերտեցին իրենց 58-ամեայ պատմութիւնը, յարգանք պարտադրելով իրենց շրջապատին:

Սոյն ձեռնարկը իրենց ներկայութեամբ պատուած էին Լիբանանի մէջ Հայաստանի արտակարգ եւ լիազօր դեսպան Սամուէլ Սկրտչեան, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Լուսարարապետ Գերաշնորհ Տէր Յովնան Եպիսկոպոս Յակոբեան, Գերաշնորհ Տէր Արմաշ Եպիսկոպոս Նալպանտեան՝ Դամասկոսի Թեմի Առաջնորդ, Մեծի Տանն Կիլիկիոյ Արժանապատիւ հոգեւորական Տէր Պետրոս Վարդապետ Մանուէլեան, Արժանապատիւ Տէր Գարեգին Վարդապետ Համբարձումեան՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գեղորգեան Հոգեւոր ճեմարանին տեսուչ և մեծ թիւով ազգայիններ ու բարեկամներ:

Իր ողջոյնի խօսքով ձեռնարկը բացուած յայտարարեց Համախմբումի ատենապետուհի Տիկին Անահիտ Տանճիկեան: Ան համառօտ կերպով ներկայացուց Համախմբումին առաքելութիւնն ու անոր հատած 58-ամեայ ճանապարհը: «Այո՛, մենք սիրայօժար վերցուցինք Հայ Առաքելական Եկեղեցւոյ խորանին վերեւ գտնուող «Լուսաւորչի Կանթեղ»ը եւ կոչում սեպեցինք ծառայել Սուրբ Էջմիածնին, յանուն հայ եկեղեցւոյ պայծառութեան: Կը հաւատանք, որ այդ նուիրական յանձնառութիւնը տակաւին երկար տարիներ պիտի շարունակուի եւ Սուրբ Էջմիածնի Կրօնասէր Տիկնանց Համախմբումը փայլուն ապագայի տեսիլքով պիտի դիմաւորէ բազմաթիւ տարեշրջաններ: 58 տարիներու հոգեւոր, մշակութային ծառանգը եւ իմաստութիւնը խոր հաւատքով պիտի փոխանցենք յաջորդող սերունդներուն: 58 տարիներու

վրայ ամբարուած ճիգ, անսահման նուիրում, անխախտ հաւատքով պիտի փոխանցենք նոր սերունդի մայրերուն, որպէսզի քրիստոնէական հաւատքով պահպանեն իրենց հայ օճախները»: Տիկ. Տանճիկեան ապա երախտագիտութեան իր խօսքը յայտնեց բոլոր այն հանգուցեալ ատենապետուհիներուն, վարչականներուն, անդամուհիներուն, արժեւորելով անոնց բոլորանուէր ու նուիրեալ աշխատանքը: Ապա շնորհակալութիւն յայտնեց բոլոր անոնց, որոնք Հայ Եկեղեցւոյ ծառայութեան ճանապարհին, սատարած են Համախմբումին աշխատանքներուն:

Գեղարուեստական բաժնով հանդէս եկան լիբանանահայ սիրուած երգիչ ճոնի Կեօքեճեան (Թեմոր) եւ Օլկա Պոլուն (Ղաշնամուր), որոնք իրենց ելոյթներով հանդիսութեան շնորհեցին առաւել հմայք՝ ազգային, հոգեւոր երգերու ընտրանիով:

Այս առիթով Սուրբ Էջմիածնէն ժամանող հոգեւոր հայրերու ներկայութիւնը Էջմիածնական օրհնութիւնը բերին իրենց հետ, Մայր Աթոռին ողջոյնն ու պատգամը



Համախմբումի երկարամեայ վաստակաւոր անդամուհիներ Մատած Տիկին Սիմի Յարութիւնեան եւ Տիկին Գոհար Խաչատուրեան

Համախմբումի անդամներուն եւ մեր բոլորին անխտիր: Գերաշնորհ Տէր Յովնան Եպ. Յակոբեան ընթերցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց կաթողիկոսի Հայրապետական "Գիր Օրհնութիւն" ուղղուած Սուրբ Էջմիածնի Կրօնասէր Տիկնանց Համախմբումին՝ ոտնկայս ունկնդրութեամբ:

Ապա բանախօսեց Արժանապատիւ Տէր Գարեգին Վարդապետ Համբարձումեանը՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գեղորգեան Հոգեւոր ճեմարանին տեսուչ. Ներկաները մեծ պատանդի վրայ հետեւեցան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մասին «Շողակաթ» հեռատեսիլի կայանին պատրաստած հաղորդումը:

Գերաշնորհ Տէր Արմաշ Եպիսկոպոս Նալպանտեան ընթերցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական "Գիր Օրհնութիւն" ուղղուած Տիկին Ազատուհի Սիմոնեանի՝ յոտնկայս ունկնդրութեամբ, ճաշէն ետք, առ ի գնահատանք իր երկարամեայ մտաւորական, ազգային ու հասարակական գործունէութեան համար:

Ապա, անակնկալով մը վարչական կազմը պատուեց Պատուոյ Վարչական՝ Տիկին Սիմի Յարութիւնեանը և ներկայ Ատենապետուհին Տիկին Անահիտ Տանճիկեանը՝ իր անխոնջ նուիրումին և հետեւողական լուրջ աշխատանքին համար, ինչպէս նաև Պրն.

Հրայր Տանճիկեանը որ յարատեւ նեցուկ կը կանգնի Համախմբումի բոլոր գործունէութեան:

Դեսպան Սամուէլ Սկրտչեան ներկաներուն փոխանցեց իր հայրենական խօսքերը. «Սուրբ Էջմիածնի Կրօնասէր Տիկնանց Համախմբումի իրագործած այս նախաձեռնութիւնը արժանի է ամէն գնահատանքի եւ շնորհակալութեան:

«Մենք բոլորս պարտաւոր ենք մշտապէս աջակցելու Համախմբումին իր գործունէութեան ծիրէն ներս եւ նեցուկ կանգնիմք անոնց նպատակներու իրագործման»: Պրն. Դեսպանը անակնկալով մը՝ պատուեց Տիկին



Դեսպան Սամուէլ Սկրտչեան կը պարգեւատրէ Տիկին Անահիտ Տանճիկեանը

Անահիտ Տանճիկեանը՝ Սփիւռքի Նախարարութեան կողմէ ոսկէ շքանշանով մը, որմէ ետք տեղի ունեցաւ Համախմբումի երկարամեայ ծառայողներուն պարգեւատրութիւնը:

45ամեայ ծառայութեան համար պարգեւատրումի արժանացան՝ Լիպարիտեան Սիլվա, Սիմոնեան Ազատուհի, Սարգիսեան Ֆրիտա: 35ամեայ ծառայութեան համար պարգեւատրումի արժանացան Սարաֆեան Մարինա, Ասիլեան Աղաւնի, Երամեան Լիւսի: 30ամեայ ծառայութեան համար պարգեւատրումի արժանացան՝ Գոճաօղլանեան Սեդա, Չենեան Մարօ: 25ամեայ ծառայութեան համար պարգեւատրումի արժանացան Պապոյեան Զարուկ, Գուլաճեան Սեդա, Գուլաճեան Վիքի, Բարդիեան Ազատուհի, Բարդիեան Զուարթ, Իւրնէշլեան Ծովակ, Ճանճանեան Անժէլ, Խուրի Յասմիկ, Ճեպեճեան Լենա: 20ամեայ պարգեւատրումի արժանացան՝ Այվազեան Արինա, Մազլումեան Հրիք, Ուզունեան Շաքէ: 10ամեայ պարգեւատրումի արժանացան Եագուպեան Մանուէլ, Սիւնկիլեան Վերթին, Պուլտուքեան Նարդուհի, Պուլտուքեան Նաթալի, Պուլտուքեան Մարիա, Գուտուգեան Եւա, Շէօհմէլեան Ազնիւ, Սերոբեան Ազատուհի:

Հանդիսութեան հուսք բանքը կատարեց Մեծի Տանն Կիլիկիոյ Տեղեկատուութեան բաժնին երիտասարդ վարդապետ Հոգեշնորհ Տէր Պետրոս Վրդ.Մանուէլեան:

Հաւատալով, որ այսօր Համախմբումը իր անջնջելի դրոշմը ձգած է Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ պատմութեան մէջ, հետեւաբար ան նաեւ կը խորհրդանշէ Հայ Եկեղեցւոյ միասնականութիւնը եւ Սուրբ Էջմիածնի ներկայութիւնը Կիլիկիոյ Աթ. Աթոռէն ներս: Համախմբումի գործունէութեան շնորհիւ, առաւել եւս ամրապնդուիլ սկսաւ մեր գաղութի հոգեկան կապը ոչ միայն Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան հետ, այլեւ վերածնած Ամենայն հայոց անկախ Հայրենիքին:

ՀՀ վարչապետի շնորհաուրական ուղերձը Յաղթանակի և խաղաղութեան տոնի առթիւ

Միբելի՛ հայրենակիցներ,

Ջերմօրէն շնորհաւորում եմ ձեզ Յաղթանակի և խաղաղութեան տոնի կապակցութեամբ:



Հայրենական մեծ պատերազմում մեր նախնիների տարած յաղթանակն իսկապէս պատմական էր: Այդ յաղթանակն ու նրանով պայմանաւորուած խաղաղութիւնը նոր դռներ բացեցին մեր ժողովրդի համար և նոր հորիզոններ բացեցին նրա ստեղծագործ աշխատանքի, երկրի շենացման ու զարգացման համար:

Հայ ժողովրդի բոլոր հատուածներն այդ յաղթանակին տուեցին այն ամէնը, ինչ կարող էին և փառքով պսակեցին իրենց անունը երկրորդ աշխարհամարտի բոլոր ճակատներում, ինչպէս նաև թիկունքում, պարտիզանական կռիւներում և դիմադրական շարժումներում:

Խորին ակնածանքով այսօր մենք մեր յարգանքն ու երախտագիտութիւնն ենք յայտնում մեր վետերաններին:

Այսօր մեզ համար կրկնակի տօն է: Մենք տօնում ենք Շուշիի ազատագրման հերթական տարեդարձը: Այդ փառաւոր յաղթանակը սուկ ռազմական յաջողութիւն չէր: Դրանով արցախահայութիւնը փրկուեց բնաջնջման վտանգից և ձեռք բերեց խաղաղ ապրելու հեռանկար:

Այսօր մենք գլուխ ենք խոնարհում մեր բոլոր նահատակների յիշատակի առջև և հաւաստիացնում, որ անհատի և ազգի ազատութեան ոտնահարումը չի հանդուրժուելու: Չի հանդուրժուելու, որովհետև մեր ժողովուրդն ունի մարդասիրական իտելալներ, ազատասեր ոգի, ինչպէս նաև միասնական կամք՝ պաշտպանելու այդ իտելալները:

Հայաստանում տեղի ունեցած ոչ բռնի, ժողովրդական, թաւշեայ յեղափոխութիւնը, նրա համաժողովրդական ընդգրկումը ևս մի անբեկանելի ապացոյց է, որ մենք ունենք յստակ պատկերացում, թէ ինչ են ազատութիւնը, ժողովրդավարութիւնը և խաղաղասիրութիւնը: Այսօր հայ ժողովուրդը Հայաստանում, Արցախում և սփիւռքում կրկին վստահ է իր ուժերին, Շուշիի ազատագրման ոգին արթուն է մեր սրտերում և աչքերում:

Միբելի՛ ժողովուրդ, Հայաստանի Հանրապետութեան հպարտ քաղաքացիներ,

Չեմ կասկածում, որ վերջին իրադարձութիւններով աւելի ամրապնդուած հայ ժողովրդի յաղթական ոգին Հայաստանին ու Արցախին բերելու է նոր յաջողութիւններ: Հայ ժողովուրդը վստահ քայլում է իր երազանքների իրականացման ճանապարհով:

Կրկին շնորհաւորում եմ բոլորիս այս փառապանծ տօնի առթիւ և մաղթում խաղաղ երկինք, արդար ու արդիւնաւետ աշխատանքի փառս մեր երկրի և ի բարօրութիւն մեր ժողովրդի:

ԶԱՆԱՐՈՎԱ. «ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ՉԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԻՐ ՓՈԽԵԼ ԻՐ ԴԻՔՈՐՈՇՈՒՄԸ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՐՑԻՆ ԳԾՈՎ»

ԹԱՍՍ լրատու գործակալութիւնը կը հաղորդէ, որ Ռուսաստանի Արտաքին Գործոց Նախարարութեան պաշտօնական ներկայացուցիչ Մարիա Զախարովա 4 Մայիսին տեղի ունեցած ձեպագրոյցի մը ընթացքին յայտարարած է, որ Ռուսաստանը հետեւողական ուղեգիծ ունի Լեռնային Ղարաբաղի հարցին մէջ եւ այսուհետեւ ալ օժանդակութիւն պիտի ցուցաբերէ հակամարտութեան լուծումին հասնելու համար: «Անտարակոյս, այդ հարցին մէջ մենք շատ հետեւողական ուղեգիծ ունինք եւ ընդհանրապէս չենք ընկրկիր, ուստի այսուհետեւ եւս պիտի շարունակենք կողմերուն օժանդակութիւն պիտի ցուցաբերել: Բայց, անգամ մը եւս կ'ըսեմ, անհրաժեշտ է սպասել Հայաստանի քաղաքական իրադրութեան կայունացումին», ընդգծած է Զախարովա:



Գերմանացի թղթակից. «Ես հպարտ եմ որ այս հիանալի յեղափոխութեան վկան եմ»



Գերմանական DW գործակալութեան թղթակիցը իր զարմանքը յայտնելով՝ Հայաստանի մէջ տեղի ունեցած իրադարձութիւններուն մասին կը գրէ.

Ես չեմ գիտեր ուրկէ՞ պէտք է սկսիլ, ինչպէ՞ս բացատրել եւ ո՞ր յեղափոխութեան հետ համեմատել այս թաւշեայ յեղափոխութիւնը: Մինչեւ հիմա չեմ կրնար հասկնալ, թէ ինչ կը պատահի Հայաստանի մէջ, կատարուածը յեղափոխութիւն է, կամ փառատօն. չեմ կրնար փառատօն անուանել, որովհետեւ այնտեղ կայ ժողովուրդ, որ պահանջներ ունի, եւ կայ կառավարութիւն, որ զիջումներու գնաց իր ժողովուրդին համար: Չեմ կրնար զայն յեղափոխութիւն անուանել, որովհետեւ ի տարբերութիւն այլ յեղափոխութիւններու, այստեղ մարդոց դէմքերուն երջանկութիւն կայ, իսկ ամենէն տարօրինակը այն է, որ զբօսաշրջիկները վախնալու եւ հեռանալու փոխարէն (ինչպէս կը պատահի այլ երկիրներու մէջ), կ'երթան մարդաշատ վայրեր:

Ուշագրաւ է այն, որ ժողովուրդը շարժումը սկսաւ ժողովրդական երգերով ու պարերով, աւարտեց՝ խորովածով ու խաղերով:

Ես միայն կրնամ ըսել, որ հպարտ եմ վկան ըլլալու պատմութեան մէջ նման հիանալի յեղափոխութեան մը, ուր ամենածանր պահերուն անգամ երկու կողմերուն միջեւ փոխադարձ սերն ակնյայտ էր:

Վերջապէս, առնուազն կ'ըսեմ, որ «Կեանքի սիրահար այս ժողովուրդը, կը պայքարի իր մարդկային արժէքներով, եւ ոչ թէ՛ անտառի օրէնքներով»:

Շարունակուած էջ 1-էն

Մայիս 9-ը Դարձած է...

Հանրապետութեան իշխանութիւններու եւ անձամբ իմ անունով՝ ի սրտէ կը շնորհաւորեմ ձեզ Յաղթանակի տօնին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան պաշտպանութեան բանակին եւ Շուշիի ազատագրման 26-րդ տարեդարձին առիթով:

Մայիս 9-ը շատոնց արդէն դարձած է մեր հերոս ժողովուրդի յաղթանակներուն խորհրդանիշը: Պատմութիւնը մէկ անգամ չէ, որ ապացուցած է, թէ տարբեր ժամանակահատուածներու մէջ հայրենիքի համար վճռորոշ պահերուն մենք կրցած ենք համախմբուիլ եւ պաշտպանել համազգային շահը, մեր հողն ու օձախը, ընտանիքն ու փոքրիկները: Մեր ժողովուրդը յաջողած է այդպէս ընել իր խիզախութեան ու արիութեան, հայրենիքի հանդէպ անսահման սիրոյ եւ նուիրումութեան, իր միասնականութեան ու անսասան կամքին շնորհիւ:

Մենք միշտ կը յիշենք մեր հերոս հայրերու եւ պապերու սիրագործութիւնները Մեծ Հայրենականին, մենք դաստիարակուած ենք անոնց օրինակով ու նաեւ այդ օրինակով ալ ոգեշնչուած ազատագրած ենք Շուշին, հայկական հինաւուրց բնակավայրերը եւ կերտած ազատ ու անկախ պետականութիւն:

Մեր ժողովուրդի հերոսական աւանդոյթները այսօր կը շարունակէ անկախութեան սերունդը, կը շարունակէ պատուով ու վստահօրէն հարստացնելով մեր տարեգրութեան յաղթական էջերը:

Թանկագի և հայրենակիցներ,

Այս տօնական օրուան առիթով կը շնորհաւորեմ մեր բոլոր քոյրերն ու եղբայրները Արցախի, Մայր Հայաստանի եւ Սփիւռքի մէջ: Թող մայիսեան նուիրական յաղթանակները միշտ ուղենիշ ըլլան մեր ժողովուրդին համար եւ տանին դէպի նոր նուաճումներ ու ձեռքբերումներ: Բոլորիս կը մաղթեմ խաղաղութիւն, բարօրութիւն ու ամենայն բարիք»:



ΔΗΜΟΣ Π.ΦΑΛΗΡΟΥ
ΔΗΜΟΤΙΚΕΣ ΒΙΒΛΙΟΘΗΚΕΣ Π.ΦΑΛΗΡΟΥ



Ο Δήμαρχος Π.Φαλήρου Διονύσης Χατζηδάκης, η «ΑΡΑΡΑΤ ΕΛΛΗΝΟΑΡΜΕΝΙΚΗ ΦΙΛΟΛΟΓΙΚΗ ΑΘΛΗΤΙΚΗ ΕΝΩΣΗ» και η Αντιδήμαρχος Περιβάλλοντος και Υπεύθυνη Δημοτικών Βιβλιοθηκών Π.Φαλήρου Βίκυ Ανδρικοπούλου, σας προσκαλούν στην αρμένικη θεατρική παράσταση με τίτλο «Υπηρέτης δύο αφεντάδων» σε σκηνοθεσία Χάικ Κασαρτζιάν (ελληνική απόδοση)



Την Πέμπτη 31 Μαΐου, 2018
& ώρα 20:00
Στον ΠΟΛΥΧΩΡΟ του Δημαρχείου Π.Φαλήρου
(Τεριψιχόρης 51 & Αρτέμιδος)



Հ.Բ.Ը.Մ.-Ի «Ա. ԳԱԼՓԱՔԵԱՆ»
ՎԱՐԺԱՐԱՆԻ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՆՐԷՍԸ
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ
ՈԳԵԿՈՉՄԱՆ ՁԵՌՆԱՐԿՆԵՐՈՒ ԾԻՐԷՆ ՆԵՐՍ



Հայոց Մեծ Եղեռնի 103-րդ տարելիցին առթիւ, «Ա. Գալփաքեան» Վարժարանի աշակերտութիւնը եւ ուսուցչական կազմը դպրոցական հանդէս մը կազմակերպեցին Ուրբաթ 27/04/2018-ին, դպրոցի «Հրանդ եւ Լուիզ Ֆէներճեան» սրահէն ներս յարգանքի տուրք մատուցելով Հայոց Ցեղասպանութեան 1.500.000 զոհերու յիշատակին:

Աշակերտներուն էլոյթը մեծ յուզումնք յառաջացուց բոլորին սրտերուն մէջ եւ միաժամանակ տրուեցաւ լուռ խոստումը որ հայութիւնը ամենուրեք պիտի չմոռնայ ու պիտի չդադրի պահանջել իր արդար դատի իրաւունքները:



ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ
Հ.Բ.Ը.Մ.
«Ա. ԳԱԼՓԱՔԵԱՆ»
ՎԱՐԺԱՐԱՆԻ

Սիրելի Օտոք,

Կը տեղեկացնենք թէ 2018-2019 դպրոցական տարեշրջանի արձանագրութիւնները, պիտի կատարուին Յունիս 1-էն մինչեւ 21 Յունիս 2018-ին: Յատկապէս Մանկապարտէզի եւ Ա. դասարանի աշակերտներուն համար, պիտի կատարուին Մայիս 1-էն:

Արձանագրութեան իրաւունք ունին.-

1. Մանկապարտէզ, այն երեխաները որ ծնած են 2013-ին (Օտոյիկ) եւ 2014-ին (Կոկոն):

2. Ա. դասարան, այն երեխաները որ ծնած են 2012-ին:

3. Մնացեալ դասարաններու աշակերտներուն համար, արձանագրութիւնները կ'ըլլան սովորական ձեւով:

4. Մանկապարտէզի եւ Ա. դասարանի արձանագրութեան, հարկ եղած հաստատագիրներուն համար, կրնաք իմանալ տնօրէնութենէն:

Կը խնդրուի արձանագրութիւնները կատարել վերոյիշեալ ժամանակամիջոցին մէջ:

Ձեր անմիջական կապակցութիւնը Տնօրէնութեան հետ, անհրաժեշտ է, ապահովելու համար յառաջիկայ դպրոցական տարեշրջանի դպրոցի հեզասահ գործունէութիւնը, ինչպէս նաեւ դպրոցական ինքնաշարժերու կարգաւորումը:

Հեռաձայններ.- Տնօրէնութիւն՝ 210-9816679

Հ.Բ.Ը.Մ. Քարտուղարութիւն՝ 210-9825685

Տնօրէնութիւն

Յիշէ...Յարգէ...Պայքարէ...Պահանջէ

Յարգելի Հայրենակից

Հայ ազգի ոչնչացման ճգնաժամային ցեղասպանութենէն եւ տաժանակիր տառապանքի թշուառութիւններէն, 103 տարիներ անցած են:

Վերքը կը մնայ անունջ եւ անմոռանալի:

Հայոց ցեղասպանութենէն ետք, երեք տարիներու իրարյաջորդ քաղաքական տխուր եղելութիւններուն, կը յաջորդէ Սարտարապատի դիւցազնամարտի յաղթանակը, որուն շնորհիւ կը կերտուի Ազատ Անկախ Հայաստանի առաջին պետականութեան հռչակումը, որմէ արդէն անցած են հարիւր տարիներ:

Յունաստանի Ռ.Ա.Կուսակցութեան Հայ Իրաւանց Խորհուրդը՝ կը նախաձեռնէ, հովանաւորութեամբ Յունահայոց Թեմական Խորհուրդին, Կիրակի 3 Յունիս 2018-ի առաւօտեան ժամը 10.30ին,

Աթէնքի «GLORIA» թատրոնին մէջ ΙΠΠΟΚΡΑΤΟΥΣ 7 και ΠΑΝΕΠΙΣΤΗΜΙΟΥ

-Ոգեկոչել՝ 24 Ապրիլ 1915-ի Հայոց Ցեղասպանութիւնը

-Փառարանել՝ 22-26 Մայիս 1918 Սարտարապատի յաղթանակը կերտող հերոսներու յիշատակի եւ

-Յիշատակել՝ 28 Մայիս 1918ի, Հայաստանի ազատ անկախ հռչակման՝ առաջին հանրապետութեան 100 ամեակը:

Օրուան խորհուրդը յարգելի ներկաներուն կը հաղորդէ յունարէն լեզուով, Յոյն հանրաձանօթ քաղաքագէտ, Յունաստանի նախկին արդարութեան նախարար եւ ներքին գործոց նախարար՝


ΧΑΡΑΛΑΜΠΟΣ ΚΑΣΤΑΝΙΔΗΣ

Որ իր հռետորական ոգեւորիչ շունչով՝ միշտ ներշնչած է իր ունկնդիրները:

Ուխտի Օր է՝ Մասնակցէ՝ Յիշէ՝ Յարգէ՝ Պայքարէ՝ Պահանջէ



Քրք Քրքորեանի Մասին Պատմող «Խաղացողը» Գիրքը Հայերէնի կը Թարգմանուի



Ամերիկահայ գործարար, միլիառատեր, բարերար, «Տրասինդա Քորփորեյշըն»-ի գործադիր տնօրէն, Հայաստանի ազգային հերոս Քրք Քրքորեանի մասին պատմող «Խաղացողը» գիրքը կը թարգմանուի հայերէն:

Ամերիկայի Միացեալ Նահանգներու մէջ լոյս տեսած եւ արդէն իսկ ամենաշատ

վաճառուած գիրքին հեղինակը Ուիլերմ Զ. Ռեմփելն է: Գիրքը հայ ընթերցողին կը ներկայացուի «Էտիթ Փրինթ» հրատարակչութեան նախաձեռնութեամբ. վերջինս ձեռք բերած է գիրքը հայերէն թարգմանելու եւ հրատարակելու բացառիկ իրաւունքը: Գիրքին թարգմանիչն է Ալինա Միրզոյեանը, աշխատանքները այս պահուն կ'ընթանան մեծ թափով:

«Գիտնալով, որ ԱՄՆ-ի մէջ լոյս տեսած է մեծանուն հայերէն մէկուն Քրք Քրքորեանի մասին գիրք մը, մենք մեծ ցանկութիւն ունէինք զայն թարգմանելու եւ ներկայացնելու մեր ընթերցողներուն: Մենք պէտք է ճանչնանք մեր ազգի արժանաւոր զուակները, հերոսները: Քրք Քրքորեանը հայ բացառիկ անհատներէն է: Եւ այս գիրքին մէջ ի յայտ կու գան բազում փաստեր, դրուագներ,

որոնք մինչ այդ յայտնի չէին ոեւէ մէկուն եւ որոնց մասին արժէ գիտնալ: Ասիկա պատմութիւն մըն է յաջողակ մարդու եւ անոր անցեալ բացառիկ ճանապարհի մասին», - կը նշէ «Էտիթ Փրինթ» հրատարակչութեան շուկայագիտութեան տնօրէն Շաւարշ Կարապետեանը:

Հրատարակչութենէն կը յայտնեն, որ «Խաղացողը» Թէ ինչպէս անփող, անուսում Քրք Քրքորեանը դարձաւ քափիթալիստական պատմութեան խոշորագոյն գործարարը» գիրքը լոյս տեսած է 2018 Յունուար 23-ին:

Ի դէպ, ասիկա փաստագրական գիրք է. բոլոր մեջբերումներն ու նկարագրական տեսարանները հիմնուած են ականատեսներու յուշերուն կամ նախապէս հրատարակուած պատմութիւններուն վրայ:

Նշենք, որ գիրքին հայերէն թարգմանութիւնը ընթերցողներու սեղանին պիտի դրուի այս տարուան Յունիսին: